

կ'ըլլայ, որ մետաքսին արժէքը կը բարձրացնէ 28 շիւնկի» :1)

ԺԸ դարուն «Սպահանի, Շամախի կամ ամբողջ Երևանի մէջ մետաքսի մէկ պարթմանը կը պարունակէ 48 կաժեր (still, չիլէ), որ կը կշռէ 1,600 մսղալ, 3 կաժ միասին կը կոչուին շատագ եւ կը կշռէ 100 մսղալ» :2)

Քըրզըն իր ծանօթ աշխատութեան մէջ կուտայ պարսկական մետաքսի արտադրութեանց ցանկ մը, հին ուղեգիրներէ առնուած, որ նոյնութեամբ հոս կը ներկայացնեմ իբր ամփոփ ծանօթութիւն :

(Ընթերցողէն կը խնդրուի դառնալ ետ՝ 84 էջը եւ կարգալ երկրորդ սիւնակի աղիւսակը) :

Ասկէ յետոյ հում մետաքսի վաճառականութեան մէջ վերջնականապէս կը սկսի հայոց անկումը :

Յիշուած քանի մը փորձերը մեծ նշանակութիւն մը չունին : 1756 ապրիլ 2-ին կը յիշուի, որ «չորհի հրովարտակ յանուն Զուղայեցի Զաքար Եէհրիմանեանց, վասն տանելոյ ի Ռուսաստան առանց մաքսից զմետաքս : Ի նմին հրովարտակի կայ յիշատակութիւն թէ յանուն Իզնատսի Եէհրիմանեան ի Մեծին Պետրոսէ կայսերէ Ռուսաց տուեալ եղեւ հրովարտակ, վասն շինելոյ զգործարան (թերեւս մետաքսի կամ չուխայի) ի Մոսկուա» :3)

Անգլիացիի մը՝ Ուիլեմ Գոքսի կը պարտինք կարեւոր տեղեկութիւններ Կասպեան ծովեղերեայ քաղաքներուն մէջ գտնուող հայ վաճառականներու ԺԸ դարուն երկրորդ կէսին ունեցած վիճակի մասին :

«Բազու բերդաքաղաք մըն է, կղմինտրէ բարձր պարիսպով մը շրջապատուած... Իր բնակչութիւնը, նման Տէրպէնտի բնակչութեան, կը բաղկանայ պարսիկներէ, թաթարներէ եւ քանի մը հայ վաճառականներէ... Բազուի առեւտուրը, թէեւ Տէրպէնտինէն աւելի արժէքաւոր, դարձեալ աննշան է եւ գլխաւորաբար յառաջ կը տարուի Շամախիի հետ,

ուրիշ կը ստանայ հում մետաքս եւ մետաքսեղէն :

Իսկ Շամախիի համար կ'ըսէ, որ Բազուէն 66 մղոն հեռու է միայն, որուն ճակիկին վաճառականական կարեւորութիւնը կը պարտէր շրջակայ շրջանին մէջ մշակուած մետաքսին : Այս հարուստ բերքը դեռ քաղաքը կործանումէ կը պաշտպանէ, թէեւ իր առեւտուրը Գուպայի խանին արտակարգ կեղեքմանց պատճառով մեծապէս նուազած է : Նախապէս ոռուսերը հոս գործատեղի մը ունէին, եւ (քաղաքը) խոնուած էր թուրք եւ յոյն վաճառականներով : Սակայն, այժմ (1777) հոն կան միայն քանի մը հայ եւ հնդիկ վաճառականներ : Բնակիչները կ'արտադրեն մետաքս եւ բամպակ հիւսուածեղէններ, սակայն այս դարուն սկիզբը հոս արտադրուածներէն շատ նուազ զեղեցիկ : Այս նահանգին մետաքսը կ'արտածուի Պարսկաստանի, Թուրքիոյ, Վերաստանի եւ Ռուսիոյ ներսերը : Վրաստանի մէկ մասին, նաեւ Կովկասի լեռնաշղթային արեւելեան մասին Շամախի դեռ կը հայթայթէ եւրոպական ապրանքներ, ձեռք բերուած գլխաւորաբար Բազուի հետ ունեցած առեւտուրով, ինչպէս նաեւ հայ եւ ռուս մաքսանենդներու միջոցով» :3)

Այլեւս Անգլիացի առեւտրականներու խօսք չկայ հոն : Առեւտուրը ինկած է : Սակայն, դեռ հայերը կը գործեն հոն : Bell կը վկայէ, որ հայերը առեւտուր կը շարունակէին Թաւրիզ-Հալէպ դժով, երբեմն Սպահան-Թաւրիզ-Կարին-Թոխաթ-Իզմիր դիժն ալ գործածելով, որպէսզի Ամսդերտամի շահաբեր հրապարակը հասնին : Նոյնիսկ Ռուսիոյ վրայով դեռ Հորլանտա ապրանք կը տանէին, Ամսդերտամի եւ նոյնիսկ Շուէտի պահանջները գոհացնելու համար :

Պարսկաստանէն շատ մը վաճառականներ Ռուսիա փոխադրուեցան : Բաւական խոշոր

3) Travels... London, 1784, Vol. II, p. 260-61: Այլուր կը վկայէ, որ Սեւ Ծովու հայ վաճառականները Փոթիէն, Տրապիզոնէն եւ Կիրասոնէն կը փոխադրէին Պարսկական եւ Թրքական հում մետաքս : (Անդ՝ էջ 271)

1) Անդ՝ էջ 350 :  
2) Անդ՝ էջ 2)« :  
3) Պատ. Նոր Զուղայու, էջ 177 :